

Մահճուտքու ղեցի Սիմէօն Ղազիկեան	1
Ներքէս Վարդանեան	1
Թարու թիւն Թարգեան	50
Աւետիս Ստեփանեան	40
Առաքել Պետրոսեան	20
Ապտալ Շիրօյեան	20
Մկրտիչ Քօսեան	20
Կոստան Մկրտչեան	50
Սարգիս Ղազարեան	20
Մինաս Շոթեան	20
Ապտալ Շոթեան	50
Միսիթար Ալէքսանեան	50
Հայրապետ Բոյոյեան	50
Ետկար Շօղոյեան	20
Գալուստ Կիրիլեան	20
Առաքել Չալիարեան	35
Թարու թիւն Կիրակոսեան	1 50
Քերոր Վերթեմեան	50
Մարտիրոս Մելքոնեան	25
Եովհաննէս Շօղոյեան	25
Առաքել Մարտիրոսեան	20
Պօղոս Մանասեան	20
Թովմաս Մուրատեան	20
Մանուկ Կիրակոսեան	20
Աւետիս Շիրօյեան	50
Աւետիս Գօրօյեան	50

(Շարունակել)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱՌ Պ ՈՒԳԼԵԱՆՑ

Հեռեւեալ գրութիւնը մեծաւ ուրախութեամբ հրատարակելով հանդերձ՝ կգովմք Մեծապատիւ Մկրտիչ Գ. Ուգլեանց սիրելի ազգայնոյ բարեպաշտ առաքինասիրութիւնը, միանգամայն մեք ևս հրապարակաւ շնորհակալութեան հաւաստիքը կվոխանակեմք նմին:

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Աստրախանայ Հայազն վաճառական Մկրտիչ Գաբրիէլեան պարոն Ուգլեանց զկնի տալոյ ի վար-

ձու և անպահանջ քարեայ կրկնարկ տուն իւր տեղակա և Թատրոնական Կառնարութեան՝ պայմանագրով ենթագրեալ էգօր մի իտարեական շրջանէ ունել ի նմարքոյ բաւանց իւրոց. ուստի ի յարգանս ընկալեալ զբաղմանկարօտ վիճակ Աստրախանայ Օրիորդական Հոգեւոր Հայոց Գարդի խնայածար կամօք խոստացաւ նուիրել զայն օր վասն օգտի յիշեալ Գարատան, և կամելով արգեամքք ևս ի կատար հասուցանել զազգօգուտ իղձ իւր և փափագի ի 21 աւուր անցիկոյ Դեկտեմբերի նշանակեաց տալ ներկայացումն, ուր ժողովեալ խումն բազմութիւն Հայազն ժողովրդոց արանց և կանանց՝ նպաստ հղեն արժանագում և բարի նպատակի Պարոն Ուգլեանցի, յորմէ զոյացան զուտ զրամք երեւելիք եւրոպական հիշատակի արարիչ և արարչական զօրք և Պարոն Ուգլեանցն անձամբ առաջի արար Հոգարարձութեան Գարդաց և թէպէտ Հոգարարձական Խորհրդարանն յետ ընդունելոյ զայն նշանաւոր գումար ի Պարոն Ուգլեանցէ՝ մեծաւ յարգանքօք յայտնեաց նմա զգրաւոր գոհունակութիւն՝ նշանակելով զանուն նորա ի թիւս մշտնջենաւոր բարերար Անդամց երկսեռ Գարդաց քաղաքիս, սակցն վասն ընդհանուր ցիտութեան համայն մերազանց՝ ի յորդոր և ի խրախոյս սոյնպիսի անձանց՝ որք բունն եռանկեամբ դարձուցանեն զքաղցր ուշադրութիւն առ Ազգայն Գարդաց, խոնարհաբար խնդրէ ի Խմբագրութեանէդ Արարատայ, հրատարակել յէջս ամսագրոյդ զազգասիրական նուիրագործութենէ Աստրախանցի Պարոն Ուգլեանցի:

Հոգաբարձօք, Աւագ քահանայ Եովսէփ Բունիաթեանց

Եովհաննէս Սարգսեանց

Սիմէօն Պօղօսեանց

Սարգիս Բուրջալեանց

Գրիգոր Սողոմոնեանց

Ի 21 Յունիւնի 1874 թ.

Աստրախան.

Թ. 6.

Հետեւեալ զրուածեան վերայ ընթերցողաց և մանաւանդ յեւնէաս աղգայնոց ուշադրութիւն կհրահարեմք:

ՅԻԳՏԻՐԷ:

«Մի մեկնասի ծնունդը՝ տասն ուսումնականի ծնունդ յառաջ կը բերէ, ասած են խմատասէրք: զոր լապտեր ի ձեռին առեալ կը խնդրեմ, պատուական ամսածիւթիդ միջոցաւ, զի առանց մեկնասի և բարերարի մեր կեանքն ասարդիւն կը լինի: Վասն որոյ սոյն ազդարարութեան հետ՝ հեղինակածս գրեանց ցանկն հրատարակելու հաճեցէք աղգասիրարար, կամ բարերար ձեռն մի գտնել՝ ի լոյս ընծայելու, կամ նպաստող բաժանորդներ, և կամ ծախքն և արդիւնքն բարերարին սեպհականելով՝ միայն հարկւր օրինակ մեզ հեղինակութեան վարձք շնորհելով:

Ցանկ հիշելու էմք:

Ա. Քերականութիւն համառօտ, տպեալ ի Վարաք 500 օրինակ, 1885, և այժմ՝ իսպառ սպառեալ, իւր զիւրօսանելի ոճին համար, որով վեց ամիս կատարեալ կարէ ուսանել աշխատասէրն, 150 դասի բաժանեալ, հարց—պատասխանով և կանոններն աշխարհաբառ աւանդած դիւրին միտք պահելու համար, 140 երեսէ բաղկացեալ. սակայն Բ. տպագրութեան պատրաստածս փորձառութեամբ կատարելագործեալ և սրբագրեալ:

Բ. Ճարտասանութիւն, հաւաքեալ ի զանազան հեղինակաց, նմանապէս հարց—պատասխանով և կանոններն աշխարհաբառ աւանդած՝ դիւրին միտ պահելու համար իսկ օրինակներն գրաբառ և ամենաընտիր հեղինակներէ և մատենագիրներէ հաւաքած, 300 երեսէ բաղկացեալ:

Գ. Հրահանգ տաղաչափութեան (ոտանաւոր գրելու) և բանաստեղծութեան, նոյնպէս հարց—պատասխանով, կանոններն աշխարհաբառ աւանդած դիւրին միտ պահելու համար, իսկ օրինակներն գրաբառ, 80 երեսէ բաղկացեալ:

Դ. Ողբերգութիւն Վարդանայ Մամիկոնէի, 100 երեսէ բաղկացեալ, և ի Վան ներկայացուցեալ, 80 երեսէ բաղկացեալ:

Ե. Ողբերգութիւն Արեւի, Սեմերի բանաստեղծութիւնն ողբերգութեան ձեռի դարձնելով, 80 երեսէ բաղկացեալ:

Ղ. Յովսէփ գեղեցիկ, թատերգութիւն, պարզ աշխարհաբառ, ի Վան ներկայացուցեալ, բաղկացեալ է 50 երեսէ:

Ե. Պատակերգ. խաբերայից, }
Ը. Պատակերգ բանտապետի } ի միաս. 100 եր.
Թ. Պատակերգ փաստաբանի } բաղկացեալ:

Ժ. «Ես դատելի», անուն տետրակ, ընդ զէմ մեք խօսիմք դուք դատէք, անուն բողոքական տետրակի, չարաչար խայտառակելով նոցա չար աղանդն:

Ն. ՍԱՐԳԻՍ ԲԱՐՍԵՂԱՆ ԳՆՈՒՆԷ,

Դասաւոր Ս. Վարդանեաց վարժարանի Հայոց յեղորդ:

Հետեւեալ նամակը թէպէտ անկողմնակալութեամբ կհրատարակեմք, սակայն չկարեմք մեր ցաւակցութիւնքը քօղարկել նամակագրին անվայելուչ մի ընթացքի համար՝ որ երբէք օգուտ չընծայիր Աստուծոյ մերադնէից և ոչ պատիւ նամակագրին ինքեան, թող զատուարակութեան նկատմամբ առթած մեծ վնասը:

Առայժմ այսքան կղերմք և կաղաչեմք՝ յուսալով որ յիշեալ Պարոն կղգայ իւր ահա՛ս ընթացքը, և հեռատեսութեամբն և քաղցրութեամբ հրաժեշտ կըտայ զրաջան և վնասապարտ ընդդիմութենէ:

ՊԱՏԱՍԻԱՆԻ «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» 1875 ԹՈՒԱԿ.

47 № ՍՈՒՐ—ՍԷՐԻ ԵՕԳՈՒԱԾԻՆ:

Աղգիս պատմութեան էջերը տխրապէս վկայումն թէ՛ մեր բարօրութեան, պարծանաց և վայելչութեան, ոչինչ այնքան խանգարիչ չէ հանդիսացել ո՛րքան անմիաբանութիւնը և սիւղիքոր անձանց ստորաբարձ նախանձու կիրքը. Համոզուած և ձայնակից են արդի դարուս մի բնագետին հետ՝ թէ ամենայն ինչ բնութեանս մէջ կրկ-